ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Աթոյան Լուսինե Սամվելի

ԱՆԳԼԵՐԵՆ ԹԵՍՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԳ.00.02 – Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ **մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ի.Կ.Կարապետյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **մանկավարժական գիտությունների դոկտոր՝ Մ.Ա. Մկրրտչյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մ.Ա. Դարաբյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է **2017 թ. նոյեմբերի 15-ին** ժամը **12:00-ին** Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ *0010, Երևան, Տիգրան Մեծի 17*

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է **2017 թ. հոկտեմբերի 14-ին:**

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու,դոցենտ՝ **Ա.Հ.Սվաջյան**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Վերջին տարիներին ՀՀ կրթության ոլորտում հետևողականորեն իրականացվում են բարեփոխումներ, որոնք վերաբերում են ոչ միայն ուսուցման որակի բարելավմանը, այլ նաև սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների մակարդակի ստուգման, գնահատման նոր, ավելի արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանը:

Սովորողների գիտելիքների գնահատման հիմնախնդիրը երբեք չի կորցնում իր այժմեականությունը, քանի որ հնարավոր չէ կազմակերպել արդյունավետ ուսուցման/ուսումնառության գործընթաց առանց այն վերահսկելու և գնահատելու:

Մասնագիտական մեթոդաբանական գրականության մեջ քննարկվող թեմայի վերաբերյալ կան բազմաթիվ աշխատանքներ և հետազոտություններ: Սույն ուսումնասիրության համար թեստերի ստեղծման պատմության և մեթոդաբանության տեսանկյունից առանձնացվել և կարևորվել են հոգեբանական (А. Анастази, С. Урбина, В. С. Аванесов, М.В. Давер, A. Binet, F. Galton, E. Thorndike, L.Terman և այլք), հոգեհայտորոշիչ (Ռ.Ստեփանյան, Ա. Գալստյան, Л.Ф. Бурлачук, Рауш де Траубенберг, И. А. Цатурова և այլք), լեզվական (R. Lado, J. M. Oller, M. Canale, E.R. Horwitz, A. Hughes, B. Paltridge և այլք) թեստերին վերաբերող, գործաբանական (J. McKeen Cattell, И. А. Рапопорт, М. И. Воскерчьян և այլք), բանավոր (K. Kitao, P. Seligson և այլք), հաղորդակցական (D. Hymes, K. Morrow, S.J. Savignon, C.J. Weir, С. Р. Балуян, Л. Н. Булгакова, Т. И. Тимофеева, А. В. Щепилова և այլք), բառապաշարի (Л. В. Банкевич), լեզվադիդակտիկական թեստավորմանը (В.А. Коккота, Л. Н. Норейко և այլք), թեստերի կիրառման ռազմավարություններին (P. Yang, A. B. Матиенко, М.В. Давер, C. Faerch, L. Oxford և այլք), թեստավորման կաղապարաներին (J. Sachs, P. Tung, R. Lam, L. Verhoeven և այլք) նվիրված աշխատանքները, ինչպես նաև անգլերենի ընթերցանության, ունկնդրության, խոսողության, գրավոր խոսքի թեստավորմանը և թեստավորման ուսուցմանը նվիրված վերջին տարիների ատենախոսությունները (В.А Андриеш 2009, Н. И. Башмакова 2003, У. *А.* Ботезат-Белая 2000, Г.А. Валитова 2000, А. Давыдова

2015, А. В. Дроздова 2010, Н. Ф. Ефремова 2003, Е. В. Заруцкая 2012, Л. Г. Компанеева 2007, В.И. Кузнецова 2011, Н. Н. Кукуева 2006, Н. В. Лаврова 1999, М. А. Магомедова 2007, М. В. Митина 2005, Е. А. Олейникова 2010, А. С. Парнюгин 2007, О. В. Позднякова 2005, Т. В. Сказочкина 2013, И. Ф. Сергеева 2001, Г. В. Царёва 2004, Т. Р. Шаповалова 2003 և այլք)

Ուսուցողական թեստերի մշակման և կիրառման տեսանկյունից առանձնանում է Ծ. Է. Շահիրյանի հետազոտությունը, ինչպես նաև Վ. Գ. Գյուլազյանի ատենախոսությունը, որը նվիրված է դպրոցականների գիտելիքների գնահատման և նրանց առողջության պահպանման հարաբերակցության հիմնախնդրին: Կարևորվում են նաև սույն հետազոտության տեսանկյունից միասնական քննությունների համար անգլերեն թեստեր ստեղծող հեղինակների աշխատանքները (Լ. Աթոյան, Մ. Ապրեսյան, Ռ. Գասպարյան, Ի. Կարապետյան և այլք):

Վերոնշյալ աշխատությունները մեծ ներդրում ունեն թեստաբանության զարգացման գործում, սակայն ՀՀ-ում բավարար չափով ուսումնասիրված չեն անգլերենի թեստերի բովանդակային, կառուցվածքային չափանիշները, համակարգային վերլուծության ենթարկված չեն անգլերենի թեստերում կիրառվող առաջադրանքների կառուցվածքային և ենթակառուցվածքային տիպերը: Ինչ վերաբերում է բանավոր հաղորդակցական կարողությունների և հմտությունների ստուգման հիմնախնդրին, ապա այն գնահատման և թեստավորման տեսանկյունից դեռևս համապարփակ քննության առարկա չի դարձել: Նույնը վերաբերում է նախաթեստավորման և հետթեստավորման ազդեցությանը վերաբերող հետազոտություններին:

Հետազոտության նպատակն է մշակել հանրակրթական դպրոցի անգլերեն ավարտական և միասնական քննությունների թեստերի օրինակելի կաղապարներ, որոնք կհամապատասխանեն ՀՀ կրթական համակարգի արդի պահանջներին և կրթական չափորոշիչներին, ներկայացնել անգլերեն թեստերի տեսական, մեթոդաբանական հիմքերը, կիրառման ռազմավարությունները:

Հետազոտության օբյեկտը սովորողների օտար լեզուների գիտելիքների որակի ստուգման և գնահատման գործընթացն է հանրակրթական դպրոցում:

Հետազոտության առարկան անգլերեն թեստերի մշակման և կիրառման մեխանիզմների ձևավորման մեթոդական համակարգն է ՀՀ-ի հանրակրթական դպրոցներում:

Հետազոտության գիտական վարկածը.

Ենթադրվում է, որ թեստավորման և թեստավորման ուսուցման ժամանակակից ռազմավարությունների ներդրումը, դասագիրք - շտեմարան - տեսամեթոդական աշխատանքների կապի ապահովումն անգլերենի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման դասընթացներում հիմք կստեղծի ուսուցիչների թեստաբանական կոմպետենցիայի և աշակերտների թեստային կոմպետենցիայի զարգացման համար:

Հետազոտության նպատակով, օբյեկտով, առարկայով և վարկածով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

- ուսումնասիրել և վերլուծել թեստաբանության պատմությանը, տեսությանը, արդի հիմնախնդիրներին նվիրված լեզվաբանական, մանկավարժամեթոդական, բուն թեստաբանական գրականություն:
- ներկայացնել տարբեր երկրներում կիրառվող հայտնի թեստերի որոշ տեսակներ և ցույց տալ թեստային առաջադրանքների կիրառման հնարավորություններն անգլերենի ավարտական և միասնական քննությունների ժամանակ:
- մշակել անգլերենի ավարտական և միասնական քննությունների թեստերի կազմման, ընտրության, կիրառման ռազմավարությունները, տեքստերի և առաջադրանքների վերլուծական ընթացակարգերը, գնահատման սանդղակները, ինչպես նաև թեստերի կազմման մեթոդիկան:
- հիմնավորել ուսուցիչների թեստաբանական և աշակերտների թեստային կոմպետենցիաների ձևավորման կաղապարի արդյունավետությունը, հաշվի առնելով կրթության որակի բարձրացման ժամանակակից պահանջներն ու չափորոշիչները: Փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը կրթության որակի բարելավման գործընթացում:

Հետազոտության մեթոդները՝

- լեզվադիդակտիկական, մեթոդաբանական, թեստաբանական գրականության վերլուծություն,

- աշակերտների և անգլերենի ուսուցիչների թեստավորում, անկետավորում,
- անգլերենի ավարտական և ընդունելության քննությունների արդյունքների, շտեմարաններում տեղ գտած սխալների և վրիպումների կառուցողական վերլուծություն,
- հարցումների, դիտարկումների արդյունքների ամփոփում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմում՝

- ուսուցման վերահսկողության և թեստավորման (J. Anderson, L. Bachman, R. Ellis, W. Taylor, N. Weir, В.С. Аванесов, И. А. Раппопорт և այլք),
-թեստավորման ռազմավարությունների մշակման և կիրառման, նախապատրաստման, ուսուցման (R. Ellis, R. Oxford, R. Lado, J. Oller, О. Г. Поляков, Н. А. Мыльцева, M. Stephens, T. Triggs, S. Wharton և այլք),
- հաղորդակցական կոմպետենցիայի թեստավորման (M. Bachman, R. Canale, A. Ellis, И.А. Цатурова և այլք),
- թեստավորման միջոցով ուսուցման և գնահատման հետադարձ կապի ապահովման (J.C. Alderson, L.F. Bachman, A.S. Palmer, A. Hughes, L. Prodromou, C.J. Weir և այլք) տեսությունները և մոտեցումները:

Հետազոտության բազա են հանդիսացել Երևանի թիվ 27, 114,166, 171,195, Գյումրու թիվ 10, 11, 21, 41, Վանաձորի թիվ 5, 6, 24, 27, Արմավիրի թիվ 1, 5, 6, 8 դպրոցները:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (2011-2012) ուսումնասիրվել են անգլերենի 10-12 դասարանների դասագրքերը, 1993-2012թթ. անգլերեն առարկայի շտեմարանները, դրանցում ընդգրկված թեստային առաջադրանքների ընտրության սկզբունքները, կազմելու ռազմավարությունները, առաջադրանքների վերլուծության ընթացակարգերը:

Երկրորդ փուլում (2012-2013թթ) վերլուծվել են հանրակրթական դպրոցների ավարտական քննությունների արդյունքները, ուսուցիչների և ծնողների բողոք-դիմումների բովանդակությունը, մշակվել են ուսուցիչների թեստաբանական կոմպետենցիայի, ինչպես նաև աշակերտների թեստային կոմպետենցիայի մակադակները որոշող հարցաթերթիկներ, վերլուծվել են հարցման արդյունքները:

Երրորդ փուլում (2013-2014թթ) մշակվել է շտեմարանների և դասագրքերի օրգանական, բովանդակային և գործառական կապի ապահովման ռազմավարություն: Վերլուծվել են շտեմարաններում տեղ գտած թեստային առաջադրանքների պահանջները: Առաջարկվել են մեթոդական ցուցումներ, հանձնարարականներ՝ միտված նոր թեստեր կազմելու և կիրառելու տեխնոլոգիաներին: Ամփոփվել և շարադրվել են հետազոտության արդյունքները:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Թեստերի ընտրության և կիրառման տեսանկյունից ուսումնասիրվել են հանրակրթական դպրոցներում կիրառվող անգլերենի ուսումնական ծրագրերը, դասագրքերը, ուսուցողական, ստուգողական թեստերը և առաջադրանքները, հստակեցվել են դրանք շարունակաբար կատարելագործելու, արդիականացնելու ուղիներն ու ռազմավարությունը :
2. Ուսուցիչների, թեստ կազմողների աշխատանքի, ընթացիկ և ավարտական քննությունների շարունակական մշտադիտարկմամբ հիմնավորվել է ուսուցիչների թեստաբանական և աշակերտների թեստային կոմպետենցիաների ձևավորման ռազմավարությունների կիրառման նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցի զարգացման արդի փուլում:
3. Փորձարությամբ հիմնավորվել է ընթացիկ և ավարտական լեզվական թեստերի կառուցվածքի, նրանցում ընդգրկվող առաջադրանքների ընտրության, կազմման համալիր մոտեցման, թետավորման ուսուցման ռազմավարությունների կիրառման առաջարկվող կաղապարի արդյունավետությունը:
4. Թեստաբանական մշակույթի ձևավորման տեսանկյունից մշակվել է թեստերի կիրառման մեթոդական համակարգ:

Հետազոտության տեսական նշանակությունը:

Մշակվել է անգլերենի թեստերի միջոցով սովորողների հաղորդակցական կարողությունների ստուգման և գնահատման կաղապարը, դասակարգվել են թեստավորման և թեստաբանության ուսուցման ժամանակակից ռազմավարությունները, հստակեցվել են թեստային առաջադրանքների կիրառման ընթացակարգերը, մշակվել են անգլերենի ավարտական և

միասնական քննությունների լեզվական թեստերի վերլուծության և գնահատման չափանիշները:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Հետազոտության ընթացքում և արդյունքում շրջանավարտների հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորվածության մակարդակի գնահատման, թեստավորման օրինակելի կաղապարը կարող է հաջողությամբ կիրառվել թե՛ հանրակրթական անգլերենի դասագրքերի, թե՛ թեստային ժողովածուների ստեղծման կամ կազմման, սովորողների գիտելիքների ընթացիկ և ավարտական ստուգումների, քննությունների ժամանակ, ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման, ուսուցիչների թեստաբանական կոմպետենցիայի մակարդակի որոշման գործընթացներում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները:

- Սովորողների հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման կարևոր պայման է օտարալեզու խոսքային գործունեության բոլոր տեսակների, ընկալողական, արտադրողական, ինտերակտիվ, մեդիատիվ կարողությունների և հմտությունների զարգացումը, որը տեղի է ունենում գրավոր և բանավոր հաղորդակցման, թարգմանական և վերլուծական կարողությունների ձևավորմամբ և դրա արդյունքների վերահսկողությամբ:
- Թե՛ ընթացիկ, թե՛ ավարտական ստուգման օբյեկտիվությունը և արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն կիրառվող լեզվական թեստերի որակով, այլև սովորողների թեստային կոմպետենցիայի ձևավորվածության աստիճանով: Ընդ որում՝ լեզվական թեստերը չեն կարող անհրաժեշտ ուսուցման և ստուգման որակ ապահովել, եթե չեն կիրառվում զուգահեռաբար հաղորդակցական կամ գործաբանական թեստեր: Տարբեր բնույթի ձախողումների մյուս պատճառն այն է, որ դասերը հիմնականում չեն անցկացվում փոխներգործուն մեթոդներով:
- Ուսուցիչների թեստաբանական մշակույթի ձևավորման գործընթացում լուրջ խոչընդոտ է այն, որ ելնելով ավանդական մոտեցումից՝ նախապատվությունը տրվում է մտապահման, ճանաչողական ռազմավարություններին, իսկ վերճանաչողական,

հուզազգայական, փոխհատուցող ռազմավարությունները չեն կիրառվում անգլերենի ուսուցման տարբեր, մասնավորապես՝ քննություններին նախապատրաստվելու փուլերում:

- Դժվար է ապահովել թեստավորման հավաստիություն, ճշգրտություն, հուսալիություն, օբյեկտիվություն, եթե խախտվում է լեզվական, հաղորդակցական, գործաբանական թեստերի կիրառման հարաբերակցությունը ուսուցման և գնահատման բոլոր փուլերում:

Հետազոտության հավաստիությունն ու արժանահավատությունն ապահովվում են թեստերի կազմման, ստեղծման, կիրառման թեստաբանական, լեզվադիդակտիկական, մեթոդական, լեզվաբանական մոտեցումների համապարփակ վերլուծությամբ, թեստավորման ռազմավարությունների ընտրությամբ և համակարգմամբ, հետազոտության հիմնախնդրի արդիականությամբ և լուծման հրատապությամբ, անգլերենի դասագրքերի և շտեմարանների վերլուծությամբ, և մշակված հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորվածության մակարդակի թեստավորման անհրաժեշտությամբ, ստացված արդյունքների հուսալիությամբ, բնագրայնության սկզբունքի կիրառմամբ:

Հետազոտության փորձաքննությունը կատարվել է ԳԹԿ-ի համապատասխան բաժինների կողմից ՀՀ-ի տարբեր դպրոցներում սովորողների լեզվական գիտելիքների և կարողությունների պլանային ստուգումների ընթացքում:

Ատենախոսության կառուցվածքը. աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 150 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

Ատենախոսության առաջին **«Օտար լեզուների թեստերի ստեղծման եվ կիրառման տեսական եվ մեթոդաբանական հիմքերը»** գլխում, որը

բաղկացած է երեք ենթագլխից, նկարագրվում է անգլերեն թեստերի ստեղծման պատմությունը, տեսությունները, մեթոդաբանական հիմքերը:

Առաջին գլխի առաջին **«Անգլերենի թեստերի ստեղծման և զարգացման փուլերը»** ենթագլխում ներկայացվում են թեստաբանության որպես գիտության ոլորտի, առաջին թեստերի առաջացման և զարգացման պատմությունը, տեսությունները, ուղղությունները, թեստաբանության մեթոդաբանության ձևավորման փուլերը**:**

Շեշտադրվում է այն գաղափարը, որ գործնականում թեստավորումը գիտելիքների ստուգման, ուսուցման գործընթացի արդյունավետության վերահսկման ձև է: Այն կիրառվում է ընթացիկ և ամփոփիչ վերահսկման համար: Համեմատվում են գնահատման ավանդական և ժամանակակից ձևերը:

Նշվում է, որ ՀՀ-ում թեստային եղանակով բուհերի ընդունելության քննություններն իրականացվել են դեռևս 1992 թվականից: 2008թ.-ին ներդրվեց անգլերենի պետական ավարտական և միասնական քննությունների նոր համակարգը: Նոր համակարգի նորույթը ոչ միայն մեկ միասնական թեստի ներմուծման գաղափարն է, այլ նաև քննական առաջադրանքների ստուգումը համակարգչային ծրագրերի միջոցով:

Երկրորդ **«Թեստերի տեսակները և դրանց կիրառման առանձնահատկությունները ՀՀ հանրակրթական դպրոցներում»** ենթագլխում վերլուծվում են թեստերի տեսակները՝ լեզվանյութի յուրացման, խոսքային կարողությունների և հմտությունների, նպատակի, բնույթի և այլն:

Վերլուծվում են Ի. Ռապոպորտի, Ռ. Սելգի և Ի. Սոտերի դասակարգումը: Նշվում է, որ ըստ կարգավիճակի՝ թեստերը լինում են ստանդարտացված և ոչ տանդարտացված, ըստ օբյեկտի վերահսկման՝ լեզվանյութի յուրացման աստիճանը, խոսքային կարողությունների ձևավորվածությունը չափող, ըստ վերահսկվող գործունեության բնույթի՝ լեզվաբանական և հաղորդակցական կոմպետենցիայի, ըստ թեստային առաջադրանքների ուղղվածության՝ դիսկրետ-ինտեգրված, գլոբալ, ըստ նորմերի և չափանիշների հարաբերակցության՝ նորմակողմնորոշիչ և չափորոշչակողմնորոշիչ:

Համապատասխան վերլուծությամբ ցույց է տրվում, որ ՀՀ-ում շրջանառվող շտեմարանները ներկայացնում են նորմատիվակողմնորոշիչ թեստեր, որոնց միջոցով որոշում են սովորողների լեզվական մակարդակը:

Երրորդ «Անգլերեն թեստերի նոր համակարգի ձևավորման գործընթացը ՀՀ-ում» ենթագլխում բացահայտվում են անգլերեն թեստերի կազմման, ներմուծման առանձնահատկություններն արդի փուլում:

Նշվում է, որ ՀՀ-ում նոր համակարգով առաջին անգամ անգլերեն առարկայից պետական ավարտական և միասնական քննություն անցկացվեց 2008թ-ին:

Շեղող պատասխանների տարբերակների (distractors) վերլուծությամբ ներկայացվում են տարբեր առաջադրանքների դրական և բացասական կողմերը:

Երկրորդ «Թեստերի կառուցման արդյունավետ կաղապարը և նրա արդյունավետության փորձարարական ստուգումը» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին «Թեստավորման գործառույթները, տեխնոլոգիաները և ռազմավարությունները հանրակրթական դպրոցներում» ենթագլխում ներկայացվում են թեստերի գործառույթները՝ ուսուցողական, դաստիարակչական, վերահսկողական: Առանձնացվում են Ս.Ֆ.Շատիլովի կողմից դասակարգված գործառույթները՝ վերահսկողական-ճշգրտող, վերահսկողական-նախազգուշացնող, վերահսկողական-խթանող, վերահսկողական-ուսուցանող, վերահսկողական-հայտորոշող, վերահսկողական-դաստիարակչական, զարգացնող, վերահսկողական-ընդհանրացնող գործառույթները[1]:

Շեշտադրվում է այն գաղափարը, որ անկախ այն բանից, թե ուսուցիչներն ինչ թեստաբանական կոմպետենցիայի մակարդակ ունեն, նրանք կիրառում են կամ լեզվի ընդհանուր տիրապետման (general proficiency tests), կամ առաջադիմության (achievement tests) թեստեր:

Թեստավորման ռազմավարություններն ընտրելիս, հաշվի են առնվում թե՛ ուսուցման, թե՛ գնահատման ռազմավարությունները, դրանց կիրառման

[1] Шатилов С.Ф. Методика обучения немецкому языку в средней школе. -М.: Просвещение, 1986. - 296 с.

ալգորիթմը: Ուսուցման և վերահսկողության, գնահատման ռազմավարությունները հիմնականում դասակարգվում են ճանաչողական, վերճանաչողական և սոցիալական մակարդակներում:

Վերլուծվում են ՀՀ-ի հանրակթական դպրոցում շրջանառվող /8-12/ դասարանների համար նախատեսված դասագրքերում կիրառվող տարբեր թեստային առաջադրանքները: Առանձնացվում են ճիշտ - ոչ ճիշտ պատասխաններով թեստերը (true-false discrimination), բազմընտրանքային (multiple choice) առաջադրանքները: Վերլուծվում են նաև համապատասխանեցման (matching), տրամաբանական հաջորդականության ընտրության (sequencing), կապակցված բնագրում բաց թողած լեզվական միավորների լրացման (cloze procedure), խմբագրման կամ սխալների ուղղման (editing), տրված բառով նախադասության փոփոխման, տեքստի բովանդակության գրաֆիկորեն արտահայտելու կամ փոխարկելու (transfer) թեստերը: 2013-2016 թթ. լույս տեսած ընդունելության քննությունների համար նախատեսված անգլերենի շտեմարաններում տեղ են գտել բազմընտրանքային (multiple choice), համապատասխանեցման (matching), կապակցված բնագրում բաց թողած լեզվական միավորների լրացման (cloze procedure) թեստերը:

Երկրորդ «Անգլերեն բանավոր խոսքի թեստավորման հիմնախնդիրը» ենթագլխում քննության են առնվում բանավոր խոսքի թեստավորման մեթոդներն ու տեխնոլոգիաները: Նշվում է, որ բանավոր խոսքի թեստավորման մեթոդների կիրառմանը խոչընդոտում է նախ և առաջ թեստերի պակասը, ուսուցիչների թեստաբանական կոմպետենցիայի ցածր մակարդակը, ինչպես նաև սովորողների քանակը դասարանում /որոշ դասարաններում 30-40 աշակերտ համատեղ օտար լեզու են սովորում/, ուսուցման և թեստավորման համար նախատեսված սահմանափակ ժամաքանակը:

Կոնկրետ օրինակներով հիմնավորվում է այն դրույթը, ըստ որի՝ փոխներգործուն մեթոդների կիրառմամբ, ուսուցիչները ոչ միայն վերահսկում են սովորողների ուսուցման ընթացքը, արդյունքները, այլև ձևավորում են նրանց օտարալեզու խոսքը:

Երրորդ «Թեստերի կառուցման առաջարկվող կաղապարի արդյունավետության փորձարարական ստուգումը» ներկայացվում են

հաղորդակցական կոմպետենցիայի գնահատման հիմնական մոտեցումները և կաղապարները, ինչպես նաև մշակված կաղապարի հիմքում ընկած լեզվական, գործաբանական, հաղորդակցական, ոչ ստանդարտ և ստանդարտ թեստերը:

Ըստ ուսուցման, վերահսկողության, փոխգործակցման խնդիրների առանձնացվում են թեստերի պլանավորման, կատարման, դժվարություններից խուսափելու, առաջադիմելու ռազմավարությունները: Դրանք վճռորոշ դեր են խաղացել մեր կողմից կազմած և մշակված թեստերի կատարելագործման ընթացքում, հատկապես երբ խոսք է գնում հաջորդաբար ընտրության (sequencing), կապակցված բնագրում բաց թողած տեղերի լրացման (cloze procedure), խմբագրման կամ սխալների ուղղման (editing) թեստերի մասին:

Հարցման արդյունքների ամփոփմամբ հաստատվում է հետազոտության նախնական վարկածը. Ըստ այդմ՝ ավարտական և ընդունելության քննություններին պատրաստվող շրջանավարտները բարձր արդյունքներ են ցույց տալիս անգլերենի բանավոր և գրավոր քննությունների ժամանակ, եթե զարգացնում են հավասարապես օտարալեզու խոսքային գործունեության բոլոր տեսակները՝ ընկալողական, արտադրողական, ինտերակտիվ, մեդիատիվ:

ՀՀ-ում և արտերկրում ստեղծված ուսումնամեթոդական համալիրների և թեստային ժողովածուների վերլուծությունը և դրանց արդյունավետությունը բացահայտող սովորողների շրջանում իրականացված հարցումը ցույց տվեց հետևյալը. ըստ հարցման ենթարկված դիմորդների 63%-ի պատասխանների՝ իրենք քննություններին նախապատրաստվելիս թարգմանել են օտարալեզու զանազան բնագրեր, 10%-ը թարգմանել է մինչև 2003 թիվը լույս տեսած շտեմարաններում տեղ գտած տեքստերը, ուսուցիչների պահանջով անգլերեն տեքստեր չի թարգմանել հարցման մասնակիցների միայն 27%-ը: (տրամագիր 1)



Տրամագիր 1. Օտար բնագրերի թարգմանություն

Ակնհայտ է, որ միայն ՀՀ-ում կամ միայն արտերկրում ստեղծված դասագրքերով և թեստային ժողովածուներով հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի: 2014 թ., բանավոր քննություն հանձնած գերազանց գնահատական ստացած 42 շրջանավարտների շուրջ 60%–ը իր պատրաստման շրջանում ունկնդրել է անգլերեն բնագրային չադապտացված տեքստեր, շուրջ 80%-ը պարբերաբար ընթերցել և թարգմանել է անգլերեն բնագրեր: Գրեթե բոլորը բանավոր խոսքը զարգացրել են մենախոսություններով և երկխոսություններով:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ բանավոր քննությունից բարձր գնահատական ստացած դիմորդների 80%-ը նույնպիսի գնահատական է ստացել նաև գրավոր քննությունից: Սակայն նույն պատկերը չէ հակառակի դեպքում: Գրավոր քննությունից 18 և բարձր գնահատական ստացած որոշ դիմորդներ բանավոր քննության ժամանակ ստանում են 5-6 միավորով ավելի ցածր գնահատականներ: Սա նշանակում է, որ նրանք լեզվին տիրապետում են հիմնականում գրավոր թեստային առաջադրանքների լուծման մակարդակում, իսկ բանավոր հաղորդակցման կոմպետենցիան նրանց մեջ ակնհայտորեն վատ է ձևավորված:

Կարելի է անել հետևություն, որ միայն ՀՀ-ում ստեղծված դասագրքերում և թեստային ժողովածուներում առկա քերականական և բառային թեստային առաջադրանքներով անգլերեն ուսումնասիրող շրջանավարտները չեն կարող զարգացնել ըստ ներկայացվող պահանջների իրենց օտարալեզու խոսքային կարողությունները:

Այսպիսով, հաշվի առնելով թե՛ ուսումնական, թե՛ արտաուսումնական գործոնները և շեշտը դնելով ուսումնական պայմաններում թեստային կոմպետենցիայի ձևավորման վրա, խնդիր է դրվում ձևավորել ուսուցիչների մոտ համապատասխան թեստաբանական գիտելիքներ, կիրառել անհրաժեշտ թեստաբանական ռազմավարություն:

Եզրակացություն

1. Թեստավորումը բազմագործառութային գործընթաց է՝ բաղկացած մի շարք բաղադրիչներից, որոնցից մեկն է փոխհատուցող ռազմավարությունը: ՀՀ-ում լինելով համեմատաբար նոր երևույթ՝ թեստավորումը և նրա

բաղադրիչները ոչ ամբողջովին են յուրացված մեր ուսուցիչների կողմից: Հատկապես դեռևս չյուրացված է մնում փոխհատուցող ռազմավարությունը:

2. Թեստային առաջադրանքների կատարման կանխագուշակման, ռեֆլեքսիվ և կատարողական ռազմավարությունների կիրառումը հիմնովին փոխում է լեզվանյութի (քերականական, բառային, հնչյունական երևույթները) և հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորվածության աստիճանն օբյեկտիվորեն ստուգելու և գնահատելու համակարգը, հիմք ստեղծում ճիշտ գնահատման, ինքնագնահատման մշակույթի ձևավորմանը միտված շարունակական հետադարձ կապի ապահովմանը:
3. Օտարալեզու բանավոր խոսքի թեստավորման օբյեկտիվության, արդյունավետ իրականացման կարևոր պայման է թեստավորման նախապատրաստական շրջանը: Հաղորդակցական թեստեր կազմելիս կարևորվում է դրանց հավաստիության ապահովումը: Դրանք պետք է, մի կողմից, արտացոլեն իրական տրամախոսությունը, մյուս կողմից՝ նպաստեն բանավոր խոսքային կարողությունների ձևավորմանը: Դրանց միջոցով հնարավոր է դառնում ստուգել սովորողների խոսքային կարողությունները իրական իրադրություններում:
4. Ունկնդրողական, բանավոր խոսքի կարողությունների և հմտությունների, ինչպես նաև գործաբանական կոմպետենցիայի ստուգման և գնահատման թեստերի մշակումը և ներդրումն անհրաժեշտ պայման են սովորողների հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման և զարգացման համար: Ավարտական և ընդունելության քննությունների ժամանակ հիմնականում կիրառվում են ավանդական թեստեր: Գործաբանական և հաղորդակցական թեստերը վերջին շրջանում դեռևս նոր են դառնում քննարկման առարկա:
5. ՀՀ-ի կրթական տարածքում շատ դեպքերում թեստ կազմողը հանդես է գալիս որպես վարկանիշավորող և գնահատող, վարչարար, որը չի կարող ընդունվել ստուգման և գնահատման ավարտական փուլում:
6. Թեստերի գործառական համակարգում առանձնանում են արտերկրում կիրառվող կանխատեսման, հայտորոշման թեստերը: Վերջիններս դեռևս չեն կիրառվում ՀՀ կրթական համակարգում: Դրանց կիրառումը կարող է որակապես փոխել ձևավորված մոտեցումները:

7. Ներկա պայմաններում փորձ է արվում կազմակերպել բանավոր քննությունները թեստավորման հավաստիության, օբյեկտիվության, հուսալիության պահպանման տեսանկյունից: Սակայն հնարավոր չէ խոսել բնագրայնության սկզբունքի ապահովման մասին, քանի որ ներկայացվող տեքստերը միշտ չէ, որ ընտրվում են այդ սկզբունքով, չկան իրական խոսքային իրադրություններ ստեղծելու թեստային առաջադրանքներ և այլն:
8. Հաղորդակցական թեստերի ներդրումն ուսուցման բոլոր փուլերում ոչ միայն հիմք է ստեղծում ընթերցանության, ունկնդրման և գրավոր խոսքի կարողությունները և հմտությունների մակարդակը ստուգելու և գնահատելու, այլև զարգացնելու համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ տպագրված հոդվածներում.

1. It ենթակայով նախադասությունների տեղեկատվական կառուցվածքը անգլերենում և նրանց հայերեն համարժեքները, Ռոմանագերմանական լեզվաբանություն: Գիտական աշխատությունների ժողովածու, ՊՐԱԿ Ա, Երևան, 2005, էջ 13-18:
2. Անգլերեն թեստերի նոր համակարգի ձևավորման գործընթացը Հայաստանում, Օտար լեզուները Հայաստանում 4, Երևան, 2011, էջ 3-10:
3. Անգլերենի ընթացիկ գնահատման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցներում, Մանկավարժություն 4,Երևան, 2011, էջ 34-39:
4. Ուսուցողական թեստը օտար լեզվի ուսուցման գործընթացում, Մանկավարժական միտք, Երևան, 2011թ, էջ 151-155:
5. Armenia, Overview of the Education System TIMSS 2011 Encyclopedia, Volume 1:A-K, Boston, 2011. - pp.97-106:
6. Armenia, Overview of the Education System TIMSS 2015 Encyclopedia, Boston, 2015, pp.1-7
7. Թեստի արդյունավետության բարձրացման ուղիներն ու միջոցները արդի փուլում ՀՀ-ում, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, N4 (13), Երևան, 2016, էջ 78-88
8. Անգլերենի թեստային առաջադրանքների նոր տիպեր, Մանկավարժություն 1, Երևան, 2017, էջ 47-54

Атоян Лусине Самвеловна

Методическая система разработки и применения тестов по английскому языку в республике Армения

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - “Методика преподавания и воспитания” (английский язык).

Защита диссертации состоится 15-го ноября 2017г. в 12^{00} на заседании специализированного совета 020 "Педагогики" ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010 г. Ереван. Ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования:

В последние годы в образовательной сфере РА проводятся реформы, которые касаются не только улучшения качества обучения, но и использования новых, более эффективных стратегий, технологий оценивания и контроля уровня знаний, умений и навыков учащихся.

В РА в должной мере не исследованы содержательные, функциональные и структурные характеристики тестов по английскому языку, не проведен системный анализ структурных и подструктурных типов, применяемых в тестовых заданиях. Что касается проблемы устных коммуникативных умений и навыков, то она еще не стала предметом исследования с точки зрения оценивания и тестирования.

Цель исследования:

Разработать теоретические и методологические основы, а также стратегии применения тестов по английскому языку, примерные модели тестов выпускных и единых экзаменов по английскому языку в соответствии с нынешними требованиями и стандартами языкового образования.

Задачи исследования:

- Изучить и проанализировать лингвистическую, психологическую, психолингвистическую, методическую литературу по теоретии тестологии.
- Рассмотреть типы тестов и определить виды тестовых заданий, предназначенных для выпускных и единых (вступительных) экзаменов по английскому языку.
- Определить стратегии составления, отбора, применения тестов по английскому языку, процедура анализа текстов и заданий, рубрики оценивания.

• Разработать, представить стратегии применения моделей новых тестов и тестовых заданий, и предложить использовать их в общеобразовательной школе. Экспериментально обосновать их продуктивность в учебном процессе.

Научная новизна исследования:

1. С точки зрения выбора и применения тестов были изучены учебные программы, учебники, обучающие, контрольные тесты и задания по английскому языку, применимые в общеобразовательных школах, были уточнены пути и стратегии их последовательного совершенствования и модернизации.
2. Постоянным мониторингом работ учителей, разработчиков тестов, а также текущих и выпускных экзаменов была обоснована целесообразность и необходимость использования стратегий формирования тестовых компетенций учителей и учеников на современном этапе развития общеобразовательной школы.
3. Экспериментально была обоснована эффективность предлагаемой модели отбора структуры текущих и выпускных языковых тестов и заданий, применения комплексного подхода, использования стратегий обучения тестирования.
4. С точки зрения формирования тестологической культуры была разработана методическая система применения тестов.

Теоретическое значение исследования:

Дана классификация современных стратегий тестирования и обучения тестологии, уточнены процедуры применения тестовых заданий, разработаны критерии анализа и оценивания тестов.

Практическое значение исследования:

Модель оценивания, тестирования уровня сформированности коммуникативной компетенции выпускников можно успешно применять и при составлении и создании учебников, тестовых сборников, и в процессе текущего и завершающего контроля учащихся, в вузовской системе подготовки и переподготовки учителей иностранных языков, определения уровня тестологической компетенции учителей.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений. Основное содержание диссертации изложено на 150 страницах.

По теме диссертации опубликовано 8 статей.

Lusine Atoyan Samvel

Methodological System of Development and Implimentation of the English Language tests in the Republic of Armenia

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 - "Teaching and Educating Methodology" (English).

The defense of the thesis will be held at 12^{00} on November 15, 2017 at the session of the Special Board 020 "Pedagogy" HAC (Higher Attestation Commission) to award scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Address: 0010, Tigran Mets ave. 17, Yerevan.

Resume

The relevance of the research:

In educational sphere of RA many reforms have been carried out which are devoted not only to developing the quality of education, but also to checking learners' knowledge and abilities, to using more effective strategies and technologies.

Contextual and structural features of English tests haven't been studied properly. Structural and sub-structural types of items used in English tests haven't been completely analyzed. The problem of checking skills and abilities of oral communication from the point of view of assessing and testing hasn't been studied yet.

The aim of the research is to work out and develop methodology of tests based on theoretical and methodical approaches and strategies, to work out models of final and unified English tests which will correspond nowadays' demands and educational criteria of educational system of RA.

Research objectives:

- to study and analyze linguistic, pedagogical- methodological, testological literature devoted to the history and theory of testology,
- to present the types of tests used in different countries and items applied to final and unified exams of English,
- to clarify the strategies of forming and selecting test items, analytical procedures of selecting texts and tasks, assessment rubrics,
- to work out and present new strategies of forming tests and items and to suggest using them in the teaching/learning process of secondary schools. To substantiate their effectiveness on improving the quality of education by experiments.

The scientific novelty of the research:

1. It studies the curricula, textbooks, teaching, controlling English tests and tasks used in secondary schools, specifies the ways and strategies for their consistent improvement and modernization from the point of view of selecting and applying the tests.
2. The regular monitoring of teachers', test developers' work, as well as the current and final exams justify the feasibility and necessity of using strategies to form teachers' and students' testological competency for the development of secondary school at the present stage.
3. It experimentally substantiates the effectiveness of the proposed model to select the structure of current and final language tests and tasks, to implement an integrated approach, to use testing training strategies.
4. It develops the methodical system of applying tests from the point of view of forming a testological culture.

The theoretical value of the research:

The research explores the principles of selecting test items and works out checking and assessing models of learners' communicative competence through tests. It classifies modern teaching strategies of testing and testology and clarifies application procedures of tests items. It works out the criterion of analyzing and assessing of final and unified English exam tests.

The practical significance of the research:

The results of the research can be used to form and write English textbooks and tests, to controll and assess students' language level during current checking and unified exams, to conduct seminars and theoretical courses of foreign language teaching processes as well as to determine processes of teachers' testological competences.

The structure and volume of the thesis: the dissertation consists of an introduction, two chapters, conclusion, bibliography and appendices. The total number of computer pages is 150 (without appendices).

Eight articles have been published on the topic of the dissertation.